

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### **WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE


Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: <a href="mailto:info@westernprelacy.org">info@westernprelacy.org</a> Website: <a href="mailto:www.westernprelacy.org">www.westernprelacy.org</a>



## *3กՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ*

## ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱԶՆՈՐԴԱՐԱՆԸ ԿԸ ՅՐԱՏԱՐԱԿԷ Ն.Ս.O.S.S. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 'TAKING THE CHURCH TO THE PEOPLE" ՅԱՏՈՐԸ



Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգ. Վարչութիւնը ուրախութեամբ կը յայտարարեն, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական շնորհաբեր այցելութեան առիթով, Ազգ. Առաջնորդարանս եւս լոյս կ'ընծայէ Վեհափառ Յայրապետի նորագոյն հատորը՝ «Taking the Church to the People»:

Յատորը կը բաղկանայ երեք բաժիններէ։ Առաջին բաժինով, Վեհափառ Յայրապետը կը նկարագրէ Եկեղեցին, անոր առաքելութիւնն ու կառոյցը, ներառեալ Թեմերն ու մայր հայրենիքի ու արտերկրի հայկական համայնքներուն ընդհանուր պատկերը։ Իւրաքանչիւրի մասին բացատրութեանց առընթեր՝ Վեհափառ

Յայրապետը կը կատարէ վերանորոցումի առաջնորդող թելադրանքներ։

Երկրորդ բաժինը յատկացուած է Յայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ այժմու հիմնահարցերուն ու դիմագրաւած մարտահրաւէրներուն։ Բաժինը իբրեւ մեկնակէտ ունի այն, որ Աստուածաշունչը քրիստոնէութեան հաւատքի ու անոր մեկնաբանութեան հիմնաքարն է։ Այնուհետեւ, Նորին Ս. Օծութիւնը կ'անդրադառնայ ընտանիքին, դպրոցին ու քրիստոնէական դաստիարակութեան արժէքներօսն ու առաքելութեան։ Այս բաժինի աւարտին, Վեհափառ Յայրապետը կը բացատրէ, թէ ինչ պէտք է հասկնալ »Աստուծոյ ժողովուրդը« ըսելով, ու կը յորդորէ որ հայ կինը, երիտասարդն ու մանուկը, որոնք լուսանցքայնացուած են երկեղեցւոյ ու հասարակական կազմակերպութեանց մէջ, պէտք է մասնակից դառնան հաւաքական կեանքի կերտումին։

Յատորի վերջին բաժինը յատկացուած է երիտասարդութեան ուղղուած Վեհափառ Յայրապետի լոյս ընծայած պատգամներուն ու նամակներուն, ուր Նորին Ս. Օծութիւնը յորդորներ կ՚ուղղէ երիտասարդութեան, ի խնդիր անոնց հետ բովանդակալից երկխօսութեան ու հաղորդակցութեան։

#### ON THE OCCASION OF THE PONTIFICAL VISIT

# WESTERN PRELACY PUBLISHES 'TAKING THE CHURCH TO THE PEOPLE" BY HIS HOLINESS ARAM I

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Religious and Executive Councils joyfully announce that on the occasion of the Pontifical Visit of H.H. Catholicos Aram I to the Western United States, the Western Prelacy also has published the latest book of His Holiness titled "Taking the Church to the People".

The book consists of three parts. In the first part, Catholicos Aram I describes the nature of the church, its mission and its institutional expressions, including the parish, the dioceses and the wider Armenian community in Armenia and the Diaspora. While describing the organization of each, His Holiness suggests=s ways in which they should be renewed.

In the second part our Pontiff identifies the core issues that the Armenian Church is currently facing. He starts with the Bible as the foundation of Christian faith and its interpretation; he then discusses the family, the school and Christian education. At the end of this section, His Holiness Aram I explains the meaning of the term "people of God" and explains why Armenian women, youth and children, who have been marginalized in the Church and all community organizations, should participate in building their communities.

In the final part of the book, His Holiness includes certain pastoral letters and messages that he has previously addressed to youth in order to prompt a meaningful dialogue with them.

The book is a basic reader for all Armenians who want to learn about the Armenian Church and its faith, mission and organization. It is an invitation to the people in Armenia and the Diaspora to equip themselves with the legacy of the past and build Armenian communities responsive to the challenges of globalization. Finally, it is a guide to being the Church as the people of God both in Armenia and Diaspora.